Հերոսի ավանդը իր դպրոցին

ԳՈՌԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Երեւանի թիվ 135 դպրոցը սեպտեմբերի 1-ին անվանակոչվեց դպրոցի շրջանավարտ, զոհված ազատամարտիկ Գագիկ Ստեփանյանի անունով: Հեթանոս Գագոն (այդպես էին նրան կոչում մարտական ընկերները) ծնվել է 1967-ին, սովորել է թիվ 135 դպրոցում: Բռնցքամարտիկ էր, Հայաստանի եռակի չեմպիոն, սպորտի վարպետ: 1992թ. ընդգրկվելով միլիցիայի հատուկ նշանակության «Հայ գունդ» ջոկատի շարքերում, մեկնեց Լաչին: Զոհվել է 1994թ. մարտի 16-ին Օմարի լեռնանցքի համար մղվող մարտերում: Արդեն ոտքից վիրավոր նա դեռ երկար դիմադրեց մեծաթիվ թշնամիների հարձակմանը: Կապ չկար, չէր գործում նաեւ խոշոր տրամաչափի գնդացիրը, իսկ փամփուշտները վերջանում էին: Վերջին նռնակը պահել էր իր համար, ողջ մնալը գերվելն էր:

ԼՂՀ Գերագույն խորհրդի հրամանագրով «հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած խիզախության եւ անձնական արիության համար» Գագիկ Ստեփանյանը պարգեւատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

Հեթանոս Գագոյի մարտական ուղին աշակերտներին ներկայացրեց ՆԳՆ ներքին զորքերի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Շավարշ Վարդանյանը:

Գագիկի զինակիցներին, հարազատներին ու ուսուցիչներին ողջունեց եւ նոր ուսումնական տարվա առթիվ դպրոցականներին ու առաջին դասարանցիներին շնորհավորեց նաեւ Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը: «Իմ խորը երախտագիտությունն եմ հայտնում դպրոցի մանկավարժական կոլեկտիվին, որը գնահատեց շրջանավարտի սխրանքը: Սա շարունակությունն է ռազմահայրենասիրական ոգով դաստիարակության, որով կրթվեց նաեւ Գագիկ Ստեփանյանը»:

Անվանակոչությանը մասնակցում էր նաեւ Ազգային ժողովի, ՊՆ, ՆԳ եւ ԱԱ մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՅԴ Բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը . «Մենք այսօր փոքրոցներ, բնակավայրեր ենք անվանակոչում նրանց անունով, ովքեր գիտակցեցին հայրենիքի առաջ իրենց պարտքը եւ արժանապատվությամբ անդամագրվեցին հայրենիքը պաշտպանելու գործին, հուշակոթողներ ենք կառուցում, սակայն ամենամեծ հիշատակը նրանց համար կլինի անկախ, ազատ, միացյալ հայրենիքը: Այն գործը, որ նրանք թողեցին, Արցախի ազատագրված հողերն են, մեր հայրենիքը, որը մենք պետք է շենացնենք, որպեսզի նրանք, ովքեր լքեցին հայրենի հողը, վերադառնան: Դա կլինի ամենամեծ հուշարձանը նրանց հիշատակին»:

ՀՅԴ միջոցներով դպրոցի մուտքի մոտ բացվեց Հեթանոս Գագոյին նվիրված հուշապատ, որտեղ պատկերված էր հերոսի բրոնզածույլ գլուխը, իսկ ներքին զորքերի եւ քաղաքապետարանի աջակցությամբ դպրոցի անվանակոչության ցուցատախտակը:

Աշակերտների մասնակցությամբ գեղարվեստական մասի ավարտից հետո դպրոցում բացվեց նաեւ Հեթանոս Գագոյին նվիրված փառքի սրահը: Ժապավենը կտրելու պատիվը տրվեց քաղաքապետին: